Հավելված 2
2024թ. Փետրվարի 07-ին
կնքված N «ԴՏՊ-1141-11018/24 ՀԿԱՐԱ» պայմանագրի

**Դրամաշնորհային հաշվետվություն N 3**

**1. Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում»<br>«Փոքրիկ Իշխան» ցերեկային սոցիալական կենտրոն Արտաշատ |
| Դրամաշնորհի N | *ԴՏՊ-1141-11018/24 ՀԿԱՐ* |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | *ՀՀ ԱՍՀՆ* |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | *«Հայկական Կարիտաս» ԲՀԿ* |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | *01.01.2024-31.12.2024 թթ..* |
| Հաշվետու ժամանակահատված | *01.07.2024թ.-30.09.2024թ.* |
| Ներկայացման օր | 14.10.2024 |
| Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն) | *Արմինե Եփրեմյան/ծրագրի ղեկավար/* |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

**Համառոտ բովանդակությունը՝** «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների» տրամադրում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մինչև 18 տարեկան երեխաների ընտանիքում ապրելու և նրանց սոցիալական ներառումն ապահովելու նպատակով զարգացնել երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան կարողություններն ու կյանքի հիմնական հմտությունները, երեխաներին և նրանց ընտանիքներին տրամադրել սոցիալական,լոգոպեդական,հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ խթանելու երեխաների սոցիալական, կրթական, առողջապահական և ընտանիքում մեծանալու հիմնարար իրավունքների իրացումը, կանխելու նրանց մուտքը հաստատություններ և /կամ նրանց սոցիալական մեկուսացումը:

Շահառու երեխաները ընդգրկված են կենտրոնի կողմից կազմակերպվող կրթադաստիարակչական՝ մշակութային, ֆիզիկական, հոգևոր կարողությունները զարգացնող միջոցառումներին՝ ըստ գնահատված սոցիալական կարիքների և անհատական սոցիալական ծրագրի:

Հաշվետու ժամանակահատվածում գնահատվել և վերագնահատվել է շահառու ընտանիքների սոցիալական կարիքները, մշակվել և վերամշակվել է անհատական սոցիալական ծրագրերը:

Հաշվետու ժամանակահատվածում ԿԴԻՀ երեխաների թիվը եղել է.

- **Հուլիս՝** 140 երեխա /81 ընտանիք/
- **Օգոստոս** ՝ 140 երեխա /83 ընտանիք/
- **Սեպտեմբեր՝** 128 երեխա /74 ընտանիք/

Հաշվետու ժամանակահատվածում ՑԽԿ-ում ընդհանուր առմամբ ծառայություն է ստացել 145 երեխա, որից 57-ը Արցախից տեղահանված ընտանիքների երեխաներ են: Իրականացվել են շահառու ընտանիքների դիմումների ընդունում, փաստաթղթերի հավաքագրում, կարիքների գնահատում, ԱՍԾ-ների կազմում և վերագնահատում: Իրականացվել է շահառուների անձնական տվյալների բազայի վերանայում և տվյալների թարմացում:

Հաշվետու ժամանակահատվածում վերագնահատվել են 125 շահառու երեխաների կարիքները՝ արդյունքում ի հայտ եկած նոր կարիքներն արտացոլվել են շահառուների ԱՍԾ-ներում, որոնք քննարկվել և մշակվել են բազմամասնագիտական թիմի կողմից՝ ըստ նախապես կազմված ժամանակացույցի: Շահառու 72 ծնողներին տրամադրվել են անանուն դիտարկման թերթիկներ՝ ծառայության որակի գնահատման և առաջարկությունների ստացման նպատակով: Վերագնահատումները և դիտարկումներն իրականացվում են եռամսյակը 1 անգամ:

Հաշվետու ժամանակահատվածում 6-18 տարեկան 145 երեխաների հետ իրականացվել է 19 խմբային սոցիալական աշխատանք (յուրաքանչյուր խմբում 25-30 երեխա) դեռահասության, ընկերասիրության, լավ և վատ սովորությունների, ճիշտ վարվեցողության և այլ թեմաներով:

- Շրջակա միջավայրի պահպանություն
- Ինչպե՞ս եմ ես ընկալում հաշմանդամությունը որպես հիմնախնդիր
- Խորհուրդներ. դրանց կարևորությունը մեր կյանքում
- Կռահեք մտապահած իրը ըստ նկարագրության
- Ինչպե՞ս են գաղջետներն ազդում երեխաների վրա
- Ինչն է պայմանավորում ընկալումները
- Ինչպե՞ս կվարվեիր
- Ապագայի գծեր
- Սպիտակ արջեր» խաղ-վարժություն
- Պանտամիմա, գուշակիր մտապահած իրը
- Ինչպե՞ս եմ պատկերացնում ինձ ապագայում
- Դեռահասությունը ներսից ու դրսից
- Անձնական հիգիենայի կարևորությունը տարբեր տարիքներում
- Գուշակիր ընկերոջդ ըստ նկարագրության
- Որքան լավ ես ճանաչում ընկերոջդ
- Դասավորիր իրերը և գուշակիր ճիշտ պատկերը
- Հաշվարկիր և գտիր ճիշտ պատասխանը
- Ինչպե՞ս վարվել խնդրային իրավիճակներում
- Ինքնաճանաչում և ճանաչում

Երեխաները ցերեկային կենտրոնում գտնվելու ժամանակահատվածում ապահովված են ամենօրյա տաք սննդով, հիգիենիկ պարագաներով և գրենական պիտույքներով: Հաշվետու ժամանակահատվածում երեխաների կարիքների գնահատման հիման վրա առանձնացվել են կրթական կարիքները՝ ոչ ֆորմալ կրթական դասընթացների և խմբակներին մասնակցելու նպատակով:
Երեխաների հետ պարբերաբար իրականացվել են անհատական և խմբային քննարկումներ, որի արդյունքում խմբակներին մասնակցել են՝

- էթիկա և քաղաքավարություն՝ 128 երեխա
- սպորտ, առողջ ապրելակերպ՝ 125 երեխա
- կար ու ձևի խմբակ՝ 25 երեխա
- անգլերենի խմբակ՝ 28 երեխա
- համակարգչի խմբակ՝ 21 երեխա
- ձեռքի աշխատանք և դիզայն՝ 15 երեխա
- խոհարարության խմբակ՝ 22 երեխա
- հեյուսնագործության խմբակ՝ 24 երեխա
- նկարչության խմբակ՝ 49 երեխա

Հաշվետու ժամանակահատվածում անհատական սոցիալական աշխատանքների տրամադրման միջոցով շարունակվել են շահառու երեխաների սոցիալական պաշտպանության ծառայություններն ընտանեկան, դպրոցական և համայնքային կյանքում՝ խնդիրների բացահայտման և լուծման նպատակով: Ի հայտ եկած խնդիրները ստացել են իրենց անհրաժեշտ լուծումները:
Անհատական սոցիալական աշխատանքներ են իրականացվել ընտանեկան հարաբերությունների կարգավորման, դպրոցում երեխաների վարքի կարգավորման,

հիգիենայի պահպանման կարևորության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման նպատակով:

Շահառու 145 երեխաների հետ իրականացվել է 8 խմբային հոգեբանական աշխատանք՝ (յուրաքանչյուր խմբում 10-20 երեխա):

Շահառու 8-14 տարեկան 11 երեխաների հետ իրականացվել է հոգեբանական խմբային աշխատանք «Համախմբող ծաղիկ» թեմայով, որի նպատակն էր խմբի անդամների համախմբումը, խմբային համագործակցության բարձրացումը:

Շահառու 7-10 տարեկան 11 երեխաների հետ իրականացվել է հոգեբանական խմբային աշխատանք «Դրական մտածողության ակնոցներ» թեմայով, որի նպատակն էր երևակայության, դրական մտածողության զարգացումը:

Շահառու 6-14 տարեկան 15 երեխաների հետ իրականացվել է հոգեբանական խորհրդատվություն (6) և ճանաչողական գործընթացները՝ մտածողությունը, ուշադրությունը, հիշողությունը, մատների մոտորիկան զարգացնող վարժություններ (9).

- «Գտիր զույգը. առաջ-հետո»
- «Ամբողջացրու նկարը, գունավորիր»
- «Ընտրիր պատկերների քանակին համապատասխանող թիվը»
- «Շարունակիր շարքն ըստ օրինաչափության»
- «Հատապտուղները գծերով տեղադրիր զամբյուղի, մրգերը՝ արկղի, բանջարեղենը՝ դույլի մեջ»
- «Նկարները դասավորիր տրամաբանական հաջորդականությամբ, գծերով միացրու թվերին»

Շահառու 8-14 տարեկան 14 երեխաների հետ իրականացվել է խմբային հոգեբանական աշխատանք՝ հաղորդակցման հմտությունների, ուսումնական մոտիվացիայի ձևավորման նպատակով՝ «Դպրոցական պայուսակ» թեմայով:

Շահառու 11-16 տարեկան 19 երեխաների հետ իրականացվել է հոգեբանական խմբային աշխատանք՝ ինքնաբացահայտման որակների ձևավորման, ինքնաճանաչման և ինքնաներկայացման հմտությունների ձևավորման նպատակով՝ «Եթե ես լինեի…» թեմայով:

Շահառու 7-14 տարեկան 15 երեխաների հետ իրականացվել է հաղորդակցման հմտությունների զարգացման, սեփական զգացմունքների գիտակցման և արտահայտման նպատակով խմբային հոգեբանական աշխատանք՝ «Կարծիքների շրջան» թեմաներով:

Շահառու 7-12 տարեկան 15 երեխաների հետ իրականացվել է զարգացնող հոգեբանական խմբային աշխատանք՝ «Ո՞ր գույնն անհետացավ» թեմայով՝ կարճատև հիշողության զարգացման նպատակով:

Շահառու 9-12 տարեկան 10 երեխայի հետ իրականացվել է սեփական Ես-ի բացահայտման, ինքնաճանաչման նպատակով խմբային հոգեբանական աշխատանք՝ «Ինքդ քեզ նկարիր» թեմայով:

Հաշվետու ժամանակահատվածում խոսքի և հաղորդակցման խանգարումների բացահայտման, կանխարգելման ու հաղթահարման նպատակով լոգոպեդական անհատական աշխատանքներ են իրականացվել 11 շահառու (6-17 տարեկան ) երեխաների հետ: Իրականցվել են լոգոպեդական շտկողական աշխատանքներ և արտաբերական ապարատը մարզող վարժություններ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ ԿԴԻՀ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման և ծրագրում ընգրկելու նպատակով:
Ծրագրի թիմի կողմից կազմակերպվել է կլոր սեղան-հանդիպումներ պետական շահակիր կառույցների հետ՝ Արտաշատի համայնքապետարան, ոստիկանության անչափահասների բաժին, Միասնական սոցիալական ծառայություն, դպրոցներ, նախադպրոցական հաստատություններ, Արտաշատի առաջնային առողջության պահպանման կենտրոն:
Ծրագրի մասնագետների կողմից երեխաներին տրամադրվել է զարգացման, ուսուցման հնարավորություններ, գիտելիքներ ճիշտ վարվելակերպի և անձնական հիգիենայի պահպանման վերաբերյալ, ընդգրկվել են կարողություններին և հմտություններին համապատասխան խմբակներում, ստացել են անհատական տեխնիկական միջոցներ, դասագրքեր, հատուկ գրենական պիտույքներ:

Հաշվետու ժամանակահատվածում անձնական օգնականի ծառայություն տրամադրվել է շահառու 3 երեխաների, ովքեր ունեն հաշմանդամություն, ինտելեկտուալ ֆունկցիաների թույլ, միջին, ծանր, էմոցիոնալ-վարքային խանգարումներ, հոգեբանական զարգացման խնդիրներ: Կենտրոնում երեխաների համար անձնական օգնական են հանդիսացել յուրաքանչյուր երեխայի սոցիալական աշխատողը, ով աջակցել է վերջինիս զբաղվել անձնական հիգիենայի պահպանմամբ, հաղթահարել սոցիալականացման դժվարությունները՝ ինտեգրվել միջավայրում, սերտացնել շփումը հասակակիցների հետ: Անձնական օգնականը, գնահատելով երեխայի կարիքները, ուղղորդել է վերջինիս մասնակցելու նախընտրած խմբակներին՝ ապահովելով նրա ակտիվ մասնակցությունը, օգտագործելով սեփական կարողությունները: Երեխայի ներառման նպատակով անձնական օգնականը ապահովել է վերջինիս մասնակցությունը համայնքում և կենտրոնում իրականացվող կրթական և մշակութային միջոցառումներին:

Շահառու երեխաները ներգրավված են կյանքի հմտությունների զարգացման հնարավորություններում՝ խթանելով նրանց ներուժը որպես ակտիվ քաղաքացի, հարստացնելով երեխաների ներաշխարհը:

**Հուլիսի 19-ին** կազմակերպվել է էքսկուրսիա «Արևիկ» հանգստի գոտում, որին մասնակցել է 20 երեխա:

**Հուլիսի 10-12-ին** շահառու 4 երեխա մասնակցել է եռօրյա կրթական ճամբարին՝ Շիրակի մարզի Թորոսգյուղում:

**Հուլիսի 27-ին** 15 երեխա մասնակցել է Շիրակի մարզի Հայկավան համայնքում կազմակերպված «Հատապտուղների փառատոն 2024»-ին (ցուցահանդես վաճառք, սպորտլանդիա), որի ընթացքում երեխաները կազմակերպել են սպորտլանդիա, տարբեր ինտելեկտուալ խաղեր, ներկայացրել են իրենց ձեռքի աշխատանքներ:

**Հուլիսի 30-ին** Ընկերության միջազգային օրվա կապակցությամբ «Հայկական Կարիտաս»-ի «Արագ արձագանքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ամենախոցելի ընտանիքներին» ծրագրի շրջանակներում Ալավերդի քաղաքում ծրագրի 15 շահառու երեխա մասնակցել է սոցիալ-հոգեբանական միջոցառման: Շահառու երեխաները տեղացի երեխաների հետ միասին կազմակերպել են սպորտլանդիա, սովորեցրել են միասին պարել ազգային շուրջպարեր, երգել են ճանաչված մանկական երգեր:

**Հուլիսի 10-ին** կազմակերպվել է «Աուտիզմ և մտավոր խնդիրներ» թեմայով դասընթաց, որին մասնակցել է 14 ծնող:

**Հուլիսի 24-ին** ծրագրի սոցաշխատողները մասնակցել են Արտաշատի համայնքապետարանում «Սթրես և դեռահասության ճգնաժամ» թեմայով դասընթացին:

**Օգոստոսի 7-ին** ծրագրի 4 աշխատակից մասնակցել է «Մասնագիտական այրում և երկրորդային տրավմայի կանխարգելում» թեմայով դասընթացին:

**Օգոստոսի 12-ին** 62 շահառու երեխա մասնակցել է Հավասարը հավասարին մեթոդաբանությամբ դասընթացին «Շրջակա միջավայրի աղտոտվածություն» թեմայով ( գործնական դասընթաց-թղթի վերամշակում):

**Օգոստոս ամսին** ՀԿ-ի մեկ այլ ծրագրի միջամտությամբ ծրագրի շահառու երեխաների ձեռքի աշխատանքները նվիրաբերվել է ՀԿ-ի գործընկեր «Դանիայի Կարիտաս»-ին: Երեխաները ստացել են շնորհակալական խոսքեր:

**Սեպտեմբերի 23-ին** կազմակերպվել է խմբային աշխատանք, «Դեղձանիկ» հեքիաթի դիտում և քննարկում, որին մասնակցել է 38 երեխա:

**Սեպտեմբերի 17-ին** իրականացվել է կլոր սեղան-քննարկում Արտաշատի ՏԻՄ-երի հետ:

**Սեպտեմբերի 23-ին** «Ոչ բռնությանը» միջազգային օրվա հետ կապված իրականացվել է ծնողավարման դասընթաց՝ իրազեկող և կանխարգելիչ հանդիպում-քննարկում «Բռնության տեսակները և կանխարգելման քայլերը» թեմայով, որին մասնակցել է 32 ծնող:

**Սեպտեմբերի 20-ին** Շահումյան համայնքում իրականացվել է «Բռնությունը փոխարինենք սիրով» խորագրով արշավ, որին մասնակցել են 40 շահառու երեխա, Արտաշատի ՏԻՄ-երը և համայնքի անդամները:

**Սեպտեմբերի 30-ին** Արտաշատի Քյամարի այգում իրականացվել է «Բռնությունը փոխարինենք սիրով» խորագրով արշավ, որին մասնակցել են 50-60 երեխաներ, ՏԻՄ-ի, քաղաքապետարանի, ՄԾ-ի անդամներ և համայնքի այլ մասնակիցներ:

Հաշվետու ժամանակահատվածում 135 երեխա ստացել է գրենական պիտույքների փաթեթներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ծնողավարման 3 դասընթաց, որին մասնակցել է 19 շահառու ծնողներ «Կոնֆլիկտի տեսակները և առաջացման պատճառները» թեմայով: Շահառու ծնողներին տրամադրվել է անհատական սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն՝ հանդուրժողականության և ընկերասիրության կարևորության, անձնական հիգիենայի պահպանման, առողջ ապրելակերպի և այլ թեմաներով:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների՝ նշելով Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

Շահառու երեխաները ընդգրկված են եղել բոլոր կրթադաստիարակչական՝ մշակութային, ֆիզիկական, հոգևոր կարողությունները զարգացնող միջոցառումներին՝ խաղերի և տարբեր վարժությունների միջոցով:
Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունների արդյունավետությունը հստակ տեսանելի է, զարգացել են շահառու երեխաների սոցիալ-հոգեբանական կարողությունները և կյանքի հիմնական հմտությունները, սոցիալապես ակտիվ են, ընդգրկված են համայնքային կյանքում, հաճախում են համայնքային մշակութային օջախներ, զգալիորեն բարելավված է կյանքի հմտությունների որակը:
Նոր շահառու երեխաները ներառված են կենտրոնում:
Բոլոր նոր շահառուների հետ կնքվել են սոցիալական բնույթի նվիրաբերության պայմանագրեր և կազմվել են անհատական փաստաթղթերի փաթեթներ:
Կազմակերպվել են միջոցառումներ ծրագրի շահառու երեխաների, ծնողների և շահագրգիռ կառույցի ներկայացուցիչների հետ միասին:
Բոլոր միջոցառումներն ուղղված են դեպի երեխաների իրավունքների և պարտականությունների կարևորում, սոցիալականացում, զարգացնելով ինքնուրույնությունն ու հաղորդակցման հմտությունները: Երեխաները ծանոթացել են սեփական ընդունակություններին, ինչը նպաստել է երեխաների մտածողության զարգացմանը, լայնացրել նրանց մտահորիզոնը՝ ազդելով անձնային ու հոգեկան որակների զարգացման վրա:
Երեխաները կենտրոնի աշխատակիցների հետ պարբերաբար իրականացրել են շրջապատի, համայնքի մաքրման և հարդարման աշխատանքներ:
Ոչ ֆորմալ կրթական խմբակների մասնակցության արդյունքում երեխաները տիրապետում են էթիկայի և առողջ ապրելակերպի կանոններին, ձեռք են բերել խոհարարական հմտություններ, բարելավվել են անգլերենի իմացության մակարդակը, զարգացրել են կարողությունները կար ու ձևի, հեյունագործության, նկարչության, ձեռքի աշխատանք և դիզայնի ասպարեզում: Մասնակցելով համակարգչի խմբակին երեխաները տիրապետում են Word, Excel-ի բարդ

ֆունկցիաներին, համակարգչային ծրագրերին և ուսումնասիրել են գրաֆիկական դիզայն:
Սոցիալ-հոգեբանական միջոցառումների արդյունքում երեխաները հասակակիցների հետ հարաբերություններում դրսևորում են ոչ խնդրահարույց վարքագիծ:
Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի աջակցությամբ «IT Artashat» խաղերի և վեբ ծրագրավորման կենտրոն են հաճախել շահառու 2 երեխա՝ WEB ծրագրավորման դասընթացին և ավարտել են ստանալով համապատասխան վկայական:
Սոցիալական աշխատողների կողմից իրականացվել է նոր շահառու երեխաների «Մանուկ» տեղեկատվական համակարգում մուտքագրումները:
Շահառու ծնողները ծնողավարման դասընթացներին մասնակցելու արդյունքում տիրապետում են դաստիարակման դրական և արդյունավետ միջոցներին՝ գիտակցելով բռնության բացասական հետևանքները և ծանոթացել են բռնության կանխարգելման քայլերին: :
Ծնող-երեխա փոխհարաբերություններն ամրապնդվել են: Կենտրոնի շահառու ծնողների 90%-ը տիրապետում է երեխաների և իրենց իրավունքներին և պարտականություններին, ծանոթ են բռնության բացասական հետևանքներին:
Շահառու ընտանիքի անդամները մասնակցում են կենտրոնում կազմակերպված միջոցառումներին և խմբակներին:
Առկա են մասնակիցների ցանկ, նկարներ, գնահատման թերթիկներ:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

https://www.facebook.com/100064628296289/videos/pcb.878791517618450/873934977900329

https://www.facebook.com/ArmenianCaritas/videos/512233624708512

https://www.facebook.com/ArmenianCaritas/posts/pfbid02byTxGef5qxrkLR1PUvK65xK8X9fhWt9yjqmngpy9QCf3nEzMLQUPntJoWfbAWh9Rl

https://www.facebook.com/photo/?fbid=899680318862903&set=pcb.899681995529402

https://www.facebook.com/photo/?fbid=903113948522083&set=pcb.903188921847919

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաջորդ եռամսյակում կշարունակվեն մատուցվել ծրագրով նախատեսված ծառայությունները:
Նախատեսվում է երեխաների համար կազմակերպել մասնագիտական կողմնորոշման դասընթացներ:
Շահառու երեխաների համար կկազմակերպվի էքսկուրսիաներ՝ մշակութային ժառանգության պահպանության, փոխանցման նպատակով:
Երեխայի տարիքային առանձնահատկությունների, ճգնաժային փուլերի ծանոթացման նպատակով կշարունակվեն ծնողավարման դասընթացները և մայրերի ինքնաջակցման խմբային հանդիպումները:
Մասնագիտական կարողությունների զարգացման, զբաղվածության ապահովման նպատակով շահառու ծնողների հետ կկազմակերպվի հանդիպում:
Ծնողների համար կկազմակերպվի «Ֆինանսական միջոցների տնօրինում» թեմայով դասընթաց:
Շահառու երեխաների և ծնողների հետ կշարունակվեն մարզի Առաքելական եկեղեցու քահանայի հանդիպումներն ու զրույցները՝ ամուր պետություն, ընտանիք և կայուն հասարակություն ունենալու նպատակով:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

Արտաշատ ԲՈՒԱՏ-ի հետ համագործակցության արդյունքում 8 երեխայի տրամադրվել է անվճար ուղևորատոմս՝ համայնքապետարանի աջակցությամբ:

Ծրագրի աջակցությամբ 2 երեխայի տրամադրվել է օպտիկական ակնոց: